ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱՏՕ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՋՈՐՋ ՌՈԲԵՐՏՍՈՆԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 16 հունվարի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերտսոնին:

Վեհափառ Հայրապետը ողջունեց ՆԱՏՕ-ի խաղաղասիրական ջանքերը՝ գոհունակությամբ նշելով, որ այդ գործընթացի մեջ ներգրավված Հայաստանը փարեցտարի ընդլայնում է իր գործունեությունն այդ ոլորտում: Վեհափառ Հայրապետը նշեց, որ հայ ժողովուրդը մեծ ջատագովն է խաղաղության և, իր դարավոր պատմության ընթացքում հաճախ զրկված լինելով Աստծո այդ մեծ պարգևից, գիտե գնահատել նաև նրա արժեքը, որի հարատևության գրավականն են նաև արդարությունն ու ճշմարտությունը:

Նորին Սրբությունը նշեց նաև, որ խաղաղությունը, որպես քրիստոնեական վարդապետության առանցքային մաս, հիմնական տեղ է զբաղեցնում նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու քարոզչության մեջ: Դրն Ռոբերտսոնը, ներկայացնելով իր այցի նպատակը կովկասյան երկրներ, կարևորեց Հայաստանի դերակատարությունը փարածաշրջանի խաղաղության ամրապնդման գործում: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը բարձր գնահատեց Հայաստանի ներդրումը համաշխարհային քաղաքակրթության ասպարեզում՝ կարևորագույն իրադարձություն համարելով նաև Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանը:

Ինչպես նշեց ՆԱՏՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության ղեկավար, Բելգիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վիգեն Չիտեչյանը, 1700-ամյակի տոնակատարություններին անմասն չի մնա նաև ՆԱՏՕ-ն, որի շենքում կկազմակերպվի ցուցահանդես՝ նվիրված Հայ Եկեղեցու մեծ տարեդարձին: